


ՀԱՍՏԻ

Rédaction du Journal Arménien "ARCHALOUYCE" Hotel d'Arménie S. Bulbulian (Egypte) LE CAIRE



ԲԱԺԱՆՈՐԿՈՒԹԻՒՆ

ԳՅՈՒՊՑՈՒ

ՆՊԻՊՑՈՒ

Տարեկան 40 Եգ. ոգ

Ն. Եգամսեայ 20

ԱՐՏԱՍԱԶՄԱՆ

Տարեկան 12 Եր

ԱԶԳԱՅԻՆ . ԳՐԱԿԱՆ . ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵԱԲԱԹԸ ՄԷԿ ԱՆԳԱՄ

Ապստոլի բաժանարարութիւն չի' ընդունուիր

Ծանուցումները մասնաւոր պայմաններով կ'ընդունուին .

Ձեռագիրները եւ չեն տրուիր :

ԹԻՒՆ ԶՆՈՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ ԵՂՆԵԷ ԹՈՐՈՍՆԱՆ Արտոնաշ Եգիպտական Կառավարութեան ԿԱՐՁՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՊԻՏ Ս. ՊԵՆԷՊԵՆՍԱՆ ԹԻՒՆ

ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՅՑ

Արշալոյսի վերաբերեալ ա մէն նիւթական գործողութիւններ պիտի կատարուին փոխան ստացա կաններու , որոնք անպայման պէտք է ստորագրուած ըլլան Վարչութեան Գանձապետ Մեծ . Տիար Սարգիս Պիւլպիւլեանի կողմէ , և խմբագրութեան կնիքը պէտք է կրեն :

Հակառակ պարագային՝ ո՛ր և է ստացական անվաւեր կը նկատուի :

ՄԱՐԴ ՉՈՒՆԻՆՔ . . .

Իրողութիւնները հետզհետէ կու գան հաստատել այս խօսքին ճշմարտութիւնը , որ եթէ չեմ սխալիր՝ երեք չորս տարիներ առաջ , յարմարագոյն առթիւ մը՝ իր յօդուածներէն մէկուն մէջ կը սեղմեցնէր , մեր քէն ըրած նախկին բարեկամը՝ Լեւոն Մկրտչեան :

Բնականաբար այս « Մարդ Չուինք »-ը իր թանձրացեալ իմաստովը չպիտի առնուի , և մեր տեսած ու ճանչցած մտղայնոր , իրենց արժանապատուութիւնը վիրաւորուած չպիտի գտնեն այս բացատրութեան մէջ , մտածելով թէ՛ իրենք մարդ չեն . . .

Այո՛ , « Մարդ Չուինք . . . » այս սինքն՝ հայերուս պէս գծուարահած ազգ մը կառավարելու , օտարներու առջև անոր գոյութիւնը ցայտեցնելու , ազգին մէջ պատահած ապօրինութիւնները բառնալով խաղաղ հանգրուան մը առաջնորդելու , ազգային ընդհանրական շահերը խզմտօրէն պաշտպանելու , հաւանական վտանգները կանուխէն հեռացնելու , և վերջապէս՝ ազգը ներկայանալի գարնանելու յարմար և բաւականաչափ « Մարդ Չուինք . . . » :

Ասիկա ճշմարտութիւն մ'է : Չուտ և ցաւալի ճշմարտութիւն մը :

Այս մասին լաւագոյն դասերը՝ մեր մօտը եղող , մեզի տեսանելի ու շօշափելի եղող օրինակներէն պիտի կրնանք առնել :

Աշխարհագրութեան ու սուցիչ մը իր դասերը օգտակարապէս աւանդած կըլլայ , երբ դասաւանդութիւնները կ'սկսի իր գտնուած գա-

տարանէն և հետզհետէ ընդլայնելով՝ նախ իր ապրած քաղաքը կը ճանչցնէ աշակերտներուն , և յետոյ կ'անցնի Չին ու Ճաբոն , ծայրագոյն Արևելք ու քաղաքակրթեալ Արևմուտք . . .

Այս ուղղութեան հետեւելով քննենք ուրեմն դէպքերը և իրողութիւնները :

Մեր ազգային ընդհանրական կեանքի հորիզոնին վրայ կը շարժապատկերին այս պահուսկ . Պօլսոյ Մէկուսական ընտրութիւնները , դէպքերու կարգին մէջ , իսկ ի մասնաւորի՝ Եգիպտոսի Առաջնորդական ընտրութիւնը , որ իրողութիւններուն շարքին մէջ պէտք է սահմանափակել :

Առաջինը՝ Մէկուսական ընտրութիւնները՝ մեզի համար լաւաագոյն լուծումը գտած եղան երկու անգամ հեռագրական լուրերու շարքին նիւթ հայթայթելով . այնպէս որ՝ մեր սրճարանի փոշիքիփոնները այլ յայլմէ եղան հեռագրական լուրերուն վրայ les Réformes en Arménie վերնագիրը միայն տեսնելով : Ու յուսարից և հոգեպարար խօսուողութիւնները սկսան . . . Հարկը կա՞ր միթէ այդ վերնագրին տակ գրուածներուն պարունակութիւնը , անոնց ներքին ու փափուկ իմաստը և ի՞նչ թաքուն գիտատրութիւններույ այդպիսի հեռագիրները գրածի ուժով , հրապարակ գալը քննելու , վերլուծելու և շատախօսութիւններէ զգուշանալու :

Մենք Հայերս արդէն քիչով գոհացող ազգ մըն ենք . ի՞նչ հարկ կայ մեր միտքեր , յոգնեցնել ա՛յնպիսի բաներու վրայ , որոնց մեր խելքը , իմացականութիւնը և տկար ստամոքսն ալ չեն բաւեր իւրայնելու և մարտելու համար :

Այս ամենուն արդիւնքը ա՛յն եղաւ որ՝ Պօլսոյ Պատրիարքարանը երբեմն ուժեղ կեցուածքով մը արտայայտուելու ձեւերը առաւ՝ ու յետոյ տեղի տուաւ խաբուսիկ խոստումներու և երեւոյթներու առջև , ու ինքզինքը հակասեց իր արդի կեցուածքովը , չեզոքացնելով և սրկարացնելով գործունէութիւնը եւրոպայի մէջ տքնող Հայկական Պատգամաւորութեան , որուն նախադահը Ն. Վ. Պօղոս փաշա՝ վերջերս , ա՛յն .

ՏԵՍՈՒՐ ՅՈՒՇԵՐ

Երկինքովը սափիր , արեգակովն ոսկի , եւ օդովը բուրոյղ նարկիզ ու նուեմուար , Իս չը հրապարակեց այն առաւօսն ազգի՝ Ազգի՛ նրագներու , մարգարիս ու գոհար :

Ես կը գուշակեի , շրջանայեաց ց'վերջ , Դարձը գիշերուան հետ անցած արեւախրիս , Ու , միշտ ցրտասարսուռ դեպ առաւօսն այն պերճ , Ծանուցում կ'ընէի գուշակութիւնս հօտին :

Կը կարդայի եւ ջերմ յորդոր ու վայրապար Զ'եղի իր փարսիսէն , այլ հոն՝ անկողնի ու շուն , Ըզգոյ՞ ինկնորեղի հովիտներուն յիւսար Սըրիկներուն հոնջերը խորք ու խաղկապար :

Իր հոգն հոգայ միայն , քշուտոտքիսն անհոն Իր վիճակին , ինչո՞ւն՝ որ չ'է առաւօսած Հոգեպարար գարունը իր առօրեան :

Անա՞ղ բայց անհնաշիւ շունջերուս ըսպառուած . . . Գրոս ու գորովոս մայնըս , դժբաղդարար , Անապատներու մէջ եր ու կը բարձրանար :

Գահիրէ 29 Ապրիլ 1909 ԳԻՈՒՍԱՆ

քան իրաւամբ՝ գրեթէ ամբողջ հալութեան գորովալի սիրոյն , անկըզելի համակրանքին ու փայտալայնքին առարկան եղած էր , իր խելախ ոգորումներուն և դիւանագիտական զօրեղ ու ընդվզիչ պայքարներուն պատճառաւ :

Փակենք այս գլուխը ուրեմն , կրկնելով որ « Մարդ Չուինք . . . » եթէ մեր ունեցած մարդերը՝ որոնք մատի վրայ կրնան համբուել , նոյնիսկ Մէկուսներ ըլլան երջանիկ օր մը :

Անցնինք հիմա Եգիպտոսի Առաջնորդական ընտրութեան , որ չափէն աւելի զբաղեցուց մեզ՝ և եթէ Առաջնորդի մը ընտրութիւնը օգտակար պիտի ըլլար , իր ընտրելաւոր միջոցին երկարաձգումներովն ու անօգուտ ժամանցներովը , անտարակոյս և տրամաբանօրէն վնասակար եղաւ , այս ալ Եգիպտոսահայերուս իրական կեանքին հետ կապ ունի :

1. — Երեսփ. Ժողովոյ Ատենապետ փաշան երկու երեք տարի է զբաղած է Եւրոպայի մէջ Մալթեանք

որ իր ջանքերը արդիւնաւորապէս պըտակուին :

2. — Եգիպտական Կառավարութիւնը Եգիպտոսեան հայոց Ազգային իրաւասութիւնները օրինապէս ճանչնալու համար , իրմէ վաւերացեալ և տեղական պահանջներուն յարմարած ազգային վարչական կազմին գործունէութեան սահմանները ճշդող կանոնագիր մը կուզէ , որ ներկայացնող չկայ . . .

3. — Եգիպտոսի Մէկուսական ընտրութիւնները տեղի ունեցան , և տեղաբնակ հայերը մետասաներորդ ժամուն թուղթի վրայ ճիգեր մը թափելու վրայ կըլլան անօգուտ , գոնէ աթոռ մը գրաւելու համար , զոր չեն ունենար . . .

Ուրեմն՝ փաշային ծանրածանր զբաղումները Եւրոպայի մէջ , որ մէկ կողմանէ Պօլսոյ Ազգային Պատրիարքարանին ձախորդ համակերպումներէն առաջացած արգելքներուն կը հանգիստին , միւս կողմանէ՝ Եգիպտոսայ ազգային գործերը կը տուժեն իր բացակայութեան շնորհիւ , որուն պակասը իր կարողու-

Թեան սահմաններուն մէջ պիտի լը-
րացնէր անշուշտ Առաջնորդ մը՝ որ
Եգիպտոսէն չպիտի կրնայ ունենալ
կը կարծենք...

Առաջնորդի մը ընտրութիւնը՝
որ քանի տարի է ազգայինները և
Ազգային չըլանակը զբաղեցուց և
մենք մտնեն գիտենք թէ ինչ փու-
լերէ անցաւ, այսօր ընտրելին մեր-
ժուովը՝ եղած ամէն ջանքերը ջու-
րը կիյնան, ու մենք ալ անճրկած
կը մնանք՝ Եգիպտոսի Առաջնորդու-
թիւնը վարելու յարմար մէկը չի
գտնուելուն համար...

Եւ մի՛ զարմանաք՝ եթէ մեր
Երեսփոխանութիւնը, հակառակ Օր-
մանեան Սրբազանի մերժումներուն,
նորոգ գումարումի մը մէջ վե-
րըստին անոր վրայ կայացնէ իր
քուէները և Եգիպտոսի առաջնոր-
դական աթոռն ալ միշտ թափուր
մնայ...

Անոնք որ հանրագիրներով, հը-
րատարակութիւններով և ուրիշ ա-
մէն միջոցներով Օրմանեանի ընտ-
րութիւնը պահանջեցին, պէտք չէ՛ր որ
նախապէս անոր հաւանութիւնը առ-
նէին, պարապ տեղը ժամավաճառ
չըլլալու համար:

Իսկ անոնք որ անոր հակառակը
պնդեցին, պէտք չէ՛ր որ իրենց ընտ-
րելին ներկայացնէին, որպէս զի Ե-
րեսփոխանութիւնը իր ընելիքը գիտ-
նար և սուրի հարուածը շուրին մէջ
չ'տար:

Եթէ մեր Առաջնորդը անպատ-
ճառ նախկին պատրիարք մը պիտի
ըլլար, ինչո՞ւ չի առաջարկուէր որ
ընտրէին Գուրգան Սրբազանը, որ Ե-
գիպտոսի Առաջնորդութիւնը վարե-
լու ամէն յարմարութիւններով և
յատկութիւններով օժտուած էր:

Վերջապէս, մեր ազգային գոր-
ծերուն այսպէս անորոշ ու անկեր-
պարան վիճակի մէջ տարուբերութիւն
ի նկատի ունենալով՝ գիւրիին պիտի
ըլլայ համոզուելը թէ արդարեւ
(Մարդ Զունինք)...

ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՆՍԱՔՐՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԻՐ ՅՈՒՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ



(Շար. նախորդ. թիւէն և վերջ)

Երեւելի բժիշկ մը ըսած է. Այն
մարդը որ ուղղակի և կամ անուղղակի
կերպով չիման մէջ կը գտնուի այսպի-
սիներու հետ անհկա զո՞ մէ՛ և կամ
որս մէ՛ մարմնական փորձութիւններուն:
Այս հիւանդութիւնները կայցելեն
անոնց երրորդ և չորրորդ սերունդին
վրայ:

Շատ արգահատելի է տեսնել ան-
մեղ մանուկներու դէմքին վրայ գրոշմը՝
իրենց հայրերուն և նախահարց մեղքե-
րուն: Այս հիւանդութիւնները սոսկալի
են: Ուրիշ ակնաւոր բժիշկ մը ըսած
է, իր մէկ տեղեկագրին մէջ, սապէս
«Ես ոչինչ կրնամ ըսել այս հիւանդու-
թիւններուն համար, այլ միայն կու-
զեմ այցելութիւնը զօրաւոր կամքի մը
և ուժի մը որ կարենայ պահել ու սրը-
բացնել ամուսնութեան սուրբ դաշինքը»:

Ես չի պիտի յուզեմ եւ կամ քըն-
նեմ այս հիւանդութիւնները, անոնք
ստուարաթիւ են երկտասարդաց մէջ, որ
տարածուած են զանազան վարժութիւն-
ներով:

Շատ երիտասարդներ սակայն սա՛-
պէս կը պատճառաբանեն:

Ըսելով թէ. — Այս կիրքերը բնա-
կան են, անոր համար մենք անձնա-
տուր կըլլանք անոնց: Մարդկային ընկե-
րութիւնը գոյութիւն ունենալէ պիտի
զաղրէր եթէ ամէն բնական պէտք կա-
տարուած ըլլար տիեզերքին մէջ: Ազ-
գերն ալ պիտի սրբուէին երկրի երեսին:

Ասիկա շատ ծանծաղ ու մակերե-
սային տեսութիւն մ'է՛ եւ ամօթ է այն
երիտասարդին համար երբ այսպիսի յայ-
տարարութիւն մը կընէ: Ուրիշներ ալ
կըսեն սապէս թէ, եթէ մարդս իր մար-
մինն ու է մասը չի գործածէ նա իր
կարողութեան կէսը կը կորսնցնէ: Ա-
սոնք բոլորովին ծանծաղամիտ խօսքեր
են: Մարդկային այս գործարանները կը
ձգտին բարձր նպատակի մը, և կը
յանգին սրբազան վերջաւորութեան մը:

Նմաններու արտադրութիւնը մար-
դուս կեանքն ու մարդկութիւնն է:

Երբեմն երիտասարդներ ալ կըսեն
թէ իրենց առողջութիւնը աւելի լաւ է
քան ուրիշ երիտասարդներունը որոնք
այս փորձութեան ենթական չեն: Ասիկա
կը յիշեցնէ ինծի Հնդկաստանի մէջ գտ-
նուող այն տեսակ մը միջատները՝ ո-
րոնք իրենց ճամբան կը փորեն խոշոր
գերաններու մէջ որը առնի աղ կը ծա-
ռայէ իրենց:

Անոնք իրենց չարաչար աշխատու-
թեան վտանգը չեն տեսներ մինչև որ
օր մը այդ հսկայ ձեղնայարկը մէկէն
կիյնայ անապին շառաչելով մը և ի
րենք ալ կը մահանան անոր մէջ: Այս-
պէս է նաեւ երիտասարդներուն համար
որոնք չեն զգար իրենց չար բնաւորու-
թեանց գետնափոր գործերը: Բայց ա-
նոնք ապահովաբար պիտի տառապին
վերջը: «Անոնց ուղիները իրենց երի-
տասարդական մեղքովը լեցուն են» կըսէ
Յոթ: Իրենց սկարութիւնը յայտնի պի-
տի ըլլայ, երբ անոնք մտնեն մրցումնե-
րու արդի արհեստներուն, պաշտօնե-
թեան և քաղաքական կեանքի մէջ և
կամ երբ պէտք ունենան գիմարելու
տարափոխիկ հիւանդութեանց դէմ: Այս
պարագաներուն տակ իրենց մարմինը պի-
տի կրքի հաւելիթի մը կեղեկին նման:

Բժիշկները կըսեն թէ ոչ միայն ջը-
ղային հիւանդութիւններն են որ մար-
դըս չարութեան կը մղեն, նոյնիսկ
անմաքուր խորհրդածութիւնները մար-
դըս ֆիզիքապէս կը տկարացնեն:

Այն երիտասարդը որ իր մտքին
սանձը կը կորսնցնէ անմաքուր մտա-
ծումներու մէջ իր երիտասարդական հիւ-
թըն ալ կը կորսնցնէ: Եւ արդիւնքը՝ իր
ուղեղը իր հաւատարակչուութիւնը կը
կորսնցնէ և զնդերներն ու ջիղերը ի-
րենց կենսական ուժը կապտեն:

Այսպիսին իր շիրիմը կը փորէ:
Երբ մարդ իր ցանկացած կիրա-
կուրին համար իր լեզուն կը ջրացնէ.
նմանապէս իր կիրքերուն ցանկութեան
համար ալ իր կեանքին հիւթը կապտէ:

Պէտք է կուռիլ անմաքուրութեան
դէմ որովհետեւ նա կը տկարացնէ միտ-
քը, անիկա մարդը մտաւոր ուժն ու
զօրութիւնը կապտեն: Այն քանը որ
մարմինը կը տկարացնէ, կը տկարացնէ
նաեւ միտքը:

Որքան սոսկալի է դիտել անկիւա-
նոցի խնդրերն ու յիմարները, անոնք ա-
մէնքն ալ մտաւոր մեռածներ են:

Անմաքուրութիւնը կաղտոյէ միտքը
և կը պղծէ զայն, նա կայցելէ անոր
հիւրի մը և կամ չար ոգիի մը պէս:

Կըսուի թէ ծերունի մը երբ օր մը
Համալսարանական քրօթի մը հետ դաշտի
մը մէջ կը պտտէր, յանկարծ տեղ մը

կանգ առաւ, և իր ոտքով սկսաւ զար-
նել այդ տեղին. երբ բոթը զարմաց-
մամբ հարցուց թէ ինչ է պատճառը. ծե-
րունին ըսաւ անոր. «Թիսուս տարի ա-
ռաջ, երբ ես այն աստի ուսանող էի ու
ընկերներով միասին երբ հոս եկած
էինք. լսեցի հոս ամենագէջ պատմու-
թիւն մը զոր երբէք չեմ մոռնար կեան-
քիս մէջ, և եւս 50 տարի վերջը սոյն
չար խորհրդածութիւնները ու մտա-
ծումները կուզան կր պաշարեն միտքս:
Ուրեմն ինչո՞ւ համար կուռելու
ենք անմաքուրութեան դէմ մինչև. մեր
կեանքին վերջը: Որովհետեւ նա կար
գիլէ մարդս կեանքի մէջ ունենալիք ա-
մենամեծ ու բարձր յաղորդութիւնն է:

Անմաքուրութիւնը կը նուստացնէ
մարդուս իտեղիները: Անմաքուր մար-
դու մը իտեղիները այնքան ցած է և հեռի
է մաքուր մարդու մը իտեղիներէն ինչ-
պէս որ ոսկիանոսին խորերը բուսնող
խոտերն այնքան ցած են լեռան կողին
վրայ բուսնող խոտերէն: Անմաքուր-
ութիւնը կը մեղցնէ մարդուս տենջերը ո-
րոնք ամենաբարձր աստիճանի մը կը
տենջան, Երբեմն մարդիկ կը բաւակա-
նանան կեանքի միջակութեան մէջ ապ-
րիլ և անկէ դուրս չըլլել: Խորհիւնք թէ
ինչ պիտի ըլլային այն մարդերը եթէ
անոնք մաքուր ու բարձր ցանկութիւն-
ներ ունենային:

Անմաքուրութիւնը կը մեղցնէ մար-
դըս իր կարողութիւնն և տմիտիւմէն,
ու ինքնակեղծութիւնը մէջն:

Անմաքուրութիւնը կըստորնացնէ ու
կը տկարացնէ մարդուս կամքը: Սկզբ-
տիւր մէջ բժշկական ուսանող մը որ իր
աչքերուն տեսութիւնը կորսնցուցած
էր, բժիշկին զիմաց բժիշկը երկար
քննութիւններէ յետոյ ըսաւ. անոր. «Ե-
րիտասարդ բարեկամ կուզես որ աչքերդ
տեսնեն»: Այո՛ տղթթոր յարեց երիտա-
սարդը. եթէ այդպէս է ըսաւ բժիշկը,
դուն պէտք է քու կիրքերդ թօթափես:
Երիտասարդը զողաց, թիկնաթոռին վրայ
ինկաւ, և իր դէմքը յուսահատու-
թեամբ ու ամօթով պահեց և յետոյ
զարձաւ ու ըսաւ «Տօթթո՛ր ես տեսու-
թեանս կուզեմ զրկուիլ քան թէ կիրքե-
րէս: Խեղճ երիտասարդը, փորձութեան
այնքան գերին եղած էր որ այլևս տը-
րամաբանելու նոյնիսկ կարողութիւն չէր
ունեցած:

Անմաքուրութիւնը կըսպաննէ մար-
դուս արժանապարգութիւնը, անձնա-
յարգութիւնը (self-respect): Անկարելի
է երիտասարդի մը համար երբ ան ան-
բարոյիկ վարքեր կը յաճախէ՝ բսել ինք-
նին թէ ինքը մաքուր է: Այսպիսին
ինքզինքը կանարգէ: Ասիկա ինծի յի-
շիլ կուտայ նշանաւոր զօրավարի մը խօս-
քը որ կըսէր «Անմաքուր գիւնուները,
պատերազմի դաշտին վրայ տառջին հը-
րացանէն ու գնդակէն կսկսին զողայ: Չի
անմաքուր գիւնուրը բարոյական և քի-
ղիքական քաջութիւն չկրնար ունենալ:
Չին ժամանակներու մարդիկ իրենց
կուրծքին վրայ սա խօսքերը կը կրէին
«Իմ ուժս տասը հողիի ուժն է որովհետեւ
անձս ու սիրտս մաքուր է»:

Պէտք է կուռիլ անմաքուրութեան
դէմ որովհետեւ նա մեր համաբուր կարա-
տաւորէ: Օր մը ամէնքս ալ պիտի անց-
նինք Աստուծոյ գահին առջեւէն և ար-
գարութեան ու մաքրութեան Աստու-
ծոյն մեր մտքի ու մարմնի հաշիւները
պիտի տանք:

Նա պիտի դատէ զմեզ, մեր խոր-
հուրդներն մեր սրտերն և մեր երեւա-
կայութեան համար:

Պէտք է կուռիլ անմաքուրութեան
դէմ որովհետեւ նա մարդուս հոգեկան
զգացումն ու զօրութիւնը կապտեն,
այսինքն հոգեկան բաներ հասկնալու զօ-
րութիւնը:

Թիսուս կըսէ, «Երանի սրտով մա-
քուրներուն որովհետեւ անոնք Աստուած

պիտի տեսնեն» Անմաքուր մարդը Աստ-
ուած տեսնելու կարողութիւնն ալ չունի,
և անմաքուր մարդու մը մահը կը նը-
մանի Բիթթանիոյ եզերքը կայնող այն
մարդուն որ ջրանման չարութուն աւազին
մէջ կեցած, ինքզինքը կատարութեամբ
կը զարնէ ասդին ու անդին բայց աւելի
վար կը մխրճի աւելի խորը կերթայ
վա՛ր, աւելի վա՛ր իր հոգեվարքը դիտող
մը չըլլար և ոչ ոք կը լսէ իր վերջին
հոնդիւնն ու գալարումները: Վերջապէս
իր ձեռքը կանի բեռնոյթանայ աւազին մէջ,
և ամէն բան կրկին հարթ ու հաւա-
սար կըլլայ:

Ասիկա տեսելի մահ է մարդուս հա-
մար: Ո՛վ պիտի կարենայ ազատել այ
մարդը այն օրուան մէջ, ժայռ մը՝ բա-
ւական է որ անոր ձեռքերը բռնէ և ա-
հա անիկա ընկղմուլէն պիտի ազատի:

Ես և դուն չենք այդ ժայռը, այդ
ժայռը Թիսուս է կենդանի Աստուծոյ որ-
դին. կենդանի անձնաւորութիւնը որ
հազարներով երիտասարդներ ազատ ար-
ձակած է իրենց մեղքերու կապերէն:
Թարգմ. Անգլ. Յ. Զ. ԹԸԳԸԸՍԱՆ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ

— 0 —

«Արշալոյս» այլևս ձեռքէ չպիտի
ծախուի. բաժանորդագրութեանց մէջ
չփոթութիւններ տեղի չունենալու հա-
մար: Հետեւաւոր մեր այն ազգայիննե-
րը, որոնք թերթիս բաժանորդագրուել
կը հաճին, երրորդ թիւը չվերադարձու-
նելէ յետոյ բաժանորդ նկատուելով ի-
րենց հասցէները կը սպաքուրին: Ձեռքէ
գնել ուզող բաժանորդաց ալ դիւրեւ-
թիւն ընծայելու համար, կը խնդրենք
որ իրենց անունը ծանուցանեն խմբագ-
րութեան, փոստի միջոցաւ և սպաք-
րեալ հասցէով զրկուելու համար իրենց
թերթերը:

ՇԱՐՔՈՒԱՆ ՆՕԹԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՍՐՑԸ

Կ. Պօլսէն ամսոյս 3 թուական-
նաւ կը հեռագրուի թէ՛ Ռ. Գուռը
կաճապարէ լմնցնելու Հայկական
Բարեկարգութեան հարցը, որպէս
զի Փարսիի մէջ ճավիտ պէյի մի-
ջոցաւ կատարուած փոխառութեան
բանակցութիւնները եզրակացութեան
յանգին: Սոյն հեռագիրը ձեռքի ժա-
մանած պահուելու հաւանական է որ
համաձայնութիւնը ստորագրուած ըլ-
լայ Մեծ Եպարքոսին և Ռուսիոյ ու
Գերմանիոյ գործակաւարներուն մի-
ջև: Թուրքիոյ վերջին զիջումը այն
է որ Վանի, Պիլիզի և Սըլվազի նա-
հանգներուն մէջ վարչային ժողով-
ներուն կէս առկէս համեմատութիւն
պիտի գրուի իսլամներու և ոչ-իս-
լամներու համար, Իսկ Էրզրումի,
Մամուրէթ-իւլ-Ազիզի և Տիարպէ-
լիի կուսակալութեանց մէջ ոչ-իս-
լամներու ներկայացուցչութիւնը 40
առհարիւր համեմատութիւն պիտի
ունենայ:

Այս միեւնոյն հիմերուն վրայ
պիտի կազմուի ոստիկանութիւնը ոս-
տիկան-զինուորութիւնը և պետական
պաշտօնէութիւնը, օտար մանա-
գէտի մը հսկողութեամբ մարդա-
համարի գործողութիւնը կատարե-
լով իւրաքանչիւր ցեղի ազգաբնակ-
չութեան թիւը ճշգուհէն յետոյ:

Բ. Գուրբ անմիջապէս պիտի ուզէր ընդհանուր քննիչները անուանել, սակայն ստորագրութեան մը հանդէպ կը գտնուի թեկնածուներ գտնելու համար: Պեղծիգա իրեն կողմէ թեկնածուներ նշանակելէ յառաջ, կուզէ թուրքիոյ հետ ուղղակի բանակցութիւն իր ունենալիս Զուրիցերիացի թեկնածուներ նշանակելու ծրագիրը բոլորովին մէկ գի թողած է:

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Ահաւասիկ հայանպատ հեռագիր մը՝ ըստ սմանց խոստանալից, բայց իրականութեան մէջ բոլորովին անիմաստ և հակասական պարունակութիւն մը ունի: Այսինքն Հայկական բարենորոգումները տեղի պիտի ունենան եթէ մարդահամար տեղի ունենայ ընդ հսկողութեամբ օտար մասնագէտի մը: Նախ մարդահամարի գործողութիւն մը մէկ երկու շաբաթէն, նոյնիսկ մէկ երկու ամիսէն չի կրնար գլուխ ելլել: յետոյ հեռագրին ըսածին նայելով, օտար մասնագէտներէ թեկնածուներ գրտնելը գրեթէ անկարելի է: ուրեմն քանի որ թեկնածուներ չկան մէջ տեղը, մարդահամար տեղի չպիտի ունենայ և քանի որ մարդահամար չկատարուիր, ուրեմն Բ. Գրան որոշած բարենորոգումներն ալ գործարութեան չպիտի գրուին ըսել է:

ՄԱՆՈՒՅՈՒՄ

Ազգ. քսանգրիոյ և Գաւառներու համար գործակալներու պետքը կայ: փափաքողները կրնան գիմել Արշալոյսի խմբագրութեան հասցէին:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Կ.

ՎՈՐԳԱՆԱՆՏԸ
Երեք Հայ կուսակցութեանց տեղույս Համերաջի Մարմինները, Փետր. 16ի երկուշաբթի զիջերը, ի նպատակ իրենց ներկայացում մը սարքած են Բրէնթանիա թատրոնին մէջ, որուն յաջողութիւնը ապահովուած պէտք է նկատել: քանի որ Հայ Գաղաքական կուսակցութիւններն են որ պիտի օգտուին սոյն ներկայացման արդիւնքէն և քանի որ բեմ գրուած խաղն է Վալին Վարդան կամ Աւարայրի գիւղացիները՝ որ կրօնքի համար պատերազմեցաւ Պարսից բանակներուն հետ:

Աւելորդ պիտի ըլլայ սոյն ներկայացման համար կոչ ընել տեղույս գիտակից և անգիտակից շարքերուն, իրենց ներկայութեամբ պատուելու համար ներկայացումը, որովհետեւ գոնէ շարքերը՝ ուզեն չուզեն ներկայ պիտի ըլլան, որով յաջողութիւնը ինքնին կատարեալ կըլլայ:

Վերջին պահուն կը տեղեկանանք թէ՛ այս չքեզ ներկայացումին դերակատարները պիտի ըլլան Ս. Գ. Հնչակեան Հայ-Բեմ թատերախումբին անդամները, որոնց կազմակերպութիւնը տակաւին նոր է, թէև իրենք մեզի վաղուց ծանօթ եղած ըլլան:

Ա.Ռ.Ա.Ջ.ՈՐԴ
Այս վերջերս Եգիպտոսի Առաջնորդու մը փնտուելու համար, Իրագինէսի լապտերը ձեռքը, մեր բարեկամը՝ Սուրէն Պարթեւեան, աշխարհի շրջանը ընելէ յետոյ, կանգ առաւ Սեբաստիոյ նախկին Առաջնորդ թորգոմ Եպիսկոպոս Գուշակեանին վրայ: Գուշակեան մը կը թելագրէ այս բառը: . . .

Առժամանակեայ առաջնորդ մը ունենալու անպատեհութիւններուն վրայ մտածած չէ անշուշտ մեր պատմակիցը: Թորգոմ Եպիսկոպոսի գալուստը՝ այդ բոլոր անպատեհութիւնները պիտի պարունակէ իր մէջ: Նախ՝ արդի անխիղճութիւնը՝ որ ըստ իրենց գոյութիւն ունի, պիտի շարունակէ Առաջնորդուին առժամանակեայ հանգամանքին պատճառաւ: . . .

Երկրորդ՝ ինչպէս Աղանունի Եպիսկոպոսը Եգիպտոսէն դուրս հալածուած մը զոհեց, թորգոմ Եպիսկոպոսն ալ նոյն բանը պիտի ընէ անտարակոյս:

Երրորդ՝ պիտի հասնի ժամանակը՝ որ «ժողովրդական ներկայացուցիչներու» թուրքիկները հրապարակ պիտի ելլեն ու կառավարութեան գառնահամար Հրահանգներովը պիտի գադրին շրջաբերութեան, անորհեղինակները հերոսացնելու համար, ու է՛ն վերջը՝ Գուշակեան իր գոյաբը պիտի կապէ Եգիպտոսէն մեկնելու համար, ինչպէս կամայ ակամայ մեկնեցաւ Սեբաստիայէն: Ասիկայ պարզապէս ժամավաճառութիւն պիտի ըլլայ, «ըջափ որ մեր բարեկամը՝ Պարթեւեան, իր բոլոր բառավթերքները հրապարակ գնէ, Եգիպտոս-Ազգային նոր անխիղճութիւն մը ստեղծելու համար: . . .

Մենք կառավարիկներ որ՝ լիազոր իրաւունքներով — ինչպէս ունենալ կուզէր Աղանունի Եպիսկոպոսը — Եգիպտոսի առաջնորդ ընտրուի Ամեն. Տէր Եղիշէ Արք. Գուրեանը, և Պէնի Սուրէնի խանութպանները — բացառութիւնները, յարգելով — չի խառնուին առաջնորդարանական հարցերու և առաջնորդին գործերը չզգուարանեն: Այսպէսով՝ ազգային շատ մը խժլուքներու առջեւ կանուցի, կը կարծենք, և ազգային Առաջնորդարանն ալ անխիղճութեան մատուցելէ զերծ կը մնայ:

Ա Ռ Ի Զ Գ Ո Ւ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԾԽԱՐՀԷՆ
Լա Պուրս Էժիպիէնի Փարիզի թղթակիցը հետեւեալ ուշագրաւ ձերբակալութիւնը կը հեռագրէ իր թերթին:
Ալպէր Ժէրմէն անունով 34 տարեկան Բօլճնէզ ծնողքէ սերած անձ մը, որուն բուն անունը Լա. տիսլաւ Բիթրիզիսի է, Փարիզի մէջ ձերբակալուած է հետեւեալ պատճառներով:
Ասկէ վեց տարիներ առաջ գրաւատուն մը կը հաստատէ, որուն պատճառաւ գանգատներ կը հաս-

նին դատական իշխանութեանց, իբրև խարդախ ամբաստանելով զինքը, սակայն այս վերջնոյն կատարած քննութիւնները անհետեւանք կը մնան:

Ժէրմէն նմանօրինակ զէպրեթու կրկնութիւնը արգիլելու և միւլնոյն ատեն իր ներքին ծրագիրները հետապնդելու համար առեւտրական լրագիր մը կը հիմնէ, և իր սպասածին պէս, շնորհիւ ճարպիկորէն հիւսուած հրատարակութեանց, ո՛չ միայն բազմաքանակ սպառում կուսնենայ, այլ և իր առեւտրական գործերն ալ ահագին յառաջգիժմութիւն կուսնենան:

Մերաքանչիւրը 100 Ֆրանգ արժէքով 30,000 ազօտներ հրապարակ կը հանէ, ընկերութեան մը միջոցով շահագործելու համար իր առեւտրական թերթը, որուն քիտաւնները հետզհետէ կը բազմապատկուին:

Ժէրմէնի այս յաջողութիւնները շատ չեն տեւեր և վերստին գանգատներ կը մատուցուին Ֆրանսական կառավարութեան, որ ձերբակալելով հոշակաւոր ելեւմտագէտը, նոր հարցաքննութիւն մը կը հրամայէ կատարուած բոլոր գործողութիւններուն նկատմամբ, որուն հետեւանքը շատ վարդազոյն չպիտի ըլլայ, ինչպէս կերելի, հոշակաւոր պանդխտի նկատմամբ:

ՉԵԿՈՒՅՈՒՄ

Պէտք է ինկատի ունենալ թէ՛ Արշալոյսի բաժանորդագրութեանց արդի հրատարակման ստացականները, զորս պիտի ստուգուի Մեծ. Տիար Սարգիս Պիլիպիտեան, 1401 թիւն կիսիս, եւ այդ թիւն յստաց եղող ո՛րեւէ ստացական արժէք ունենալէ զոտի է բացարձակապէս:

ՏԻՂԱԿԱՆ

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ
Նախորդ թիւով պատմեցինք հիւրերը այն դատավարութեան, որ ասկէ առաջ Ապտինի Տեղական Նախական Դատարանը զբաղած էր Արշալոյսի նախկին վարձակալ և կարճակեաց Տնօրէն Սիմօն Խորէնի (Խորէնացի) նկատմամբ:

Թէպէտեւ մենք անձամբ միջոց չունեցանք դատավճիռին պարունակութիւնը նոյնութեամբ ի ձեռին ունենալու, սակայն դատարաններու կայ եզրդներէն կը հաստատենք թէ՛ Սիմօն Խորէնի (Խորէնացի) երեք ամիս բանտարկութեան դատապարտուած է, իբրև՝ գիտէ՛ք ինչ. . . առաւ փախաւ. . .

Դատավճիռը ի բացակայութեան տրուած է, որովհետեւ ինչպէս ծանօթ է, հայ Հե՛ՐՈՐԸ, իր հոշակաւոր չքմեղանքը(?) մեր պաշտօնակից Յուսէպի թերթին միջոցաւ հրատարակութեան յանձնելուն հետեւեալ օրն իսկ կժիկը դրած էր, վերջին մէկ երկու շահատակութիւններ ալ աւելցնելով նախկիններուն վրայ. . .
Սրտի անհուն գոհանակութեամբ մը չէ որ կը հարդրենք այս տե-

ղեկութիւնը, որովհետեւ նախ որ մենք չէինք գանգատողը, — մենք մեր պահանջներուն երաշխաւորը ունինք — այլ խորապէս կը ցաւինք որ՝ այս վճռոյն ազդեցութիւնը կիյնայ նաև անոնց վրայ, որոնք շերտ պատրաստականութիւն ցոյց տուին նիւթապէս և բարոյապէս քաջալերելու այս խեղճ դատապարտեալին սխրագործութիւնները: . . .

Բնականաբար այս տարրը՝ ինչպէս առաջ՝ հիմա ալ լաւ աչքով չի պիտի նայի մեզի, երբ քաջութիւնը ունեցանք մեր շարժումի վերահրատարակութիւնը Լեկալ հողի վրայ զնելու: Սակայն այդ ալ հոգ չպիտի ընենք: Միայն իրենց այս ընթացքը միտքերնիս պահելը բաւական է մեզի համար: . . .

ՀԵՌԱԳԻՐ

ԱՐԲԱՅԱԿԱՆ ՆՇԱՆԱՅՈՒԹԻՒՆ

Լոնտրոն 8 Փետր. — Բրէնս քրիստի եւ Յունաց Թագաւորի և անդրանիկ աղջկան նշանախօսութիւնը պաշտօնապէս կը հետքի:

ՊԱՆԳ ՏՄԹԷՆ

Աքեմ 8 Փետր. — Պ. Անպրիգօի ձերբակալուելը որոշուեցաւ առ ի կանխագոյնութիւն: Իրանսան Վարիշեր Սիլիոի բաներ արգիլափակուեցան: Աստի խնդրալի մը մասոցիս երաշխաւորութեամբ արձակուելու համար:

ԲԻՈՍ ԵՒ ՄԻՏԻԼԻ

Կ. Պոլիս 8 Փետր. — Ս. Բէքերապուրիի ղեկավարներ, ի բաց ատեալ Ռուսիայից, իրենց կառավարութիւններէն հրահանգ ստացան Բ. Իրան ժամուցանելու թէ՛ Բիսուր եւ Միսիլիս Եունաստանի բողոքած է:

ԴԷՊԻ ՀԱՆԳՍՏԵԱՆ

Կ. Պոլիս 8 Փետր. — Թուրք կառավարութիւնը հանգստեան կոչեց 56 ժողովիս պաշտօնատեւեր, որոնց երեք ժողովակալներ են: Կառավարութիւնը արտօնեց Իզմիր վերադառնալ Եպիսկոպոս Լաւարաժիսի, որ վերջինս պատեալիս ասեւ Դիւստեզ սուած էր անկէ:

ՎԷՆԷՉԻԼՈՍ

Պոլսէ 8 Փետր. — Պ. Վենեզիլիոս հոս հասաւ:

— Պ. Վենեզիլիոս Պոլսէ Դասաւ, որիկէ Պ. Բաշիլի (Պոլիսիոյ Նախարարապետ) ֆոյ պիտի երթայ: Այս տեսակցութիւններուն մեծ կարեւորութիւն կը տրուի:

— Պոլսէ Դէն կը հեռագրեն թէ՛ Տիւսօզը դէպի Ռուսաստան իր սցեռլոյսի յետագած է:

ՓՈՒՐ ԱՍԻԱ

Աքեմ 9 Փետր. — Ղալիպ պեյ Էմպուս քերթիս յայտարարած է թէ՛ Փոլիսի Փոլի Ասիոյ Յոյները պիտի խոչսանգե, երբ Բիսուր եւ Միսիլիս կորսնցուցեն:

ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Աքեմ 9 Փետր. — Պոլսէ Դէն կը հեռագրեն թէ՛ պաշտօնախօսական Դաշնադրութիւն մը կիմուած է Յունաստանի եւ Ռուսաստանի միջեւ:

T I R I N G

Թ Ի Ր Ի Ն Ք


ՊԱՎԱԲԻ ՓՈՂՈՑ ՆԱԻԿԻՆ ՓԱՍՏԱԼ

Վ Ա Ջ Ա Ն Ո Ւ Ա Տ Ա Ն Կ Ի Ց

ԵՂԱՆԱԿԻՆ ՑԱՐՄԱՐԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՆՈՐՈՒԹԻՒՆԵՐ ՀՈՍԱՍ ԵՆ ՓՈՒՔԱՑԵՔ ՕԳՏՈՒՐԼ


Կ. Պօլսոյ ամենամանօթ Թիֆլիսի Տան Գահիրէի նորահաստատ Մանածիւղն է .

ՃԼԵՕՐԻՍՔ ԻՒՆԻՎԵՐՍԵԼ



Մեծ վաճառատուն արուեստական ծաղիկներու . ծաղիկեղջերու եւ փունջերու :

Մուսի Շարա եւ Միզիչին Լասիւնց Եկեղեցոյն փողոցը



Տիկին ՀՈՒՍԻ Պ . ՉՈԼԱՔՕՅ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հայ հասարակութեան թէ՛ իր ծաղիկներու վաճառատունները փոխադրելով Շարա-էլ-Միզիչին (Մուսի) Լատինաց Եկեղեցոյն փողոցը . եւ անմրցելի աժան գիներով կը վաճառէ արուեստական ծաղիկներ, ամենաչքեղ կողմեր . հարսանեկան գեղաշէն ծաղիկներ, կանանց գլխարկներու յատուկ փնջակներ եւ յուղարկաւորութեանց ծաղիկապակներ :

Թարմ ու բնական ծաղիկներ ալ կը պատրաստուին սոյն վաճառատան մէջ . Մի՛ գիմէք օտարազգիներու , որովհետեւ Fleuriste Universelle վաճառատունը միակն է որ այդ ամեն մեծ ու պղտիկ վաճառորդներուն կը հայթայթէ արուեստական ամեն տեսակի եւ գոյնի ծաղիկները :

Ասիկայ ամենաստոյգ իրողութիւն մը ըլլալով , դիւրին է հաշուել որ այս վերջինները բուն գինէն աւելի շահով մըն է որ պիտի վաճառեն իրենց զիմողներուն . մինչդեռ ուղղակի Fleuriste Universelle վաճառատունը զիմելով տարակոյս չկայ թէ՛ անոնց շահածն ալ ձեր քսակը պիտի մնայ :

ՏՊԱՐԱՆ

Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս




ԱՐՇԱԼՈՅՍ Տպարանը՝ Արսօնեայ եգիպտական զարադիպարն ներքին Գործոց նախարարութեան . անկեանկե խնամով կը սպագրէ .

1. — Արսօնեայ Օրսքերքեր , Հանդիսներ , Պրօշիրներ , Պարքերու կաններ եւ մանաւանդ Գիրքեր .
2. — Վաճառականական սեւերներ՝ եւ գրասենեակի ամեն տեսակ սր-պագրական պիտոյքներ՝ ամեն շեղանով .
3. — Յայտարարութիւններ , շրջաքերականներ , նախակաշարակներ , Ըագրիւրներ , եւայլն .
4. — Հարսանեկան տուներ . մահագրներ եւ այլեփայտեր եւայլն .

ԱՐՇԱԼՈՅՍ Տպարանին հասցեն է , ց'հոր սեօրիւնութիւն . Շարա Մուհամմէտ Սչի . Սիբասեյ երկարող քրտնկէյի գծին վրայ , Հարք - Էյ Մասապեկ - Էյ Գասիլե , թի 40 , Տիար Միշուա Երիզէ սեի յա՛յս . քաճակն մէջ .

THE 'SINGER' MANUFACTURING Co



Շարա-էլ-Միզիչի Տափիզ Պրայնի սեփականութեանը մէջ .

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինգերներն են եւ ասոնցմէ մինչեւ ցարդ 22,000,000 ծախուած է :


400 է աւելի վկայական եւ մեքայներով վարձատրուած , Երաշխատեալ մեքենաներ ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՍ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախոյնի մէջ ստացած է . ՀԱՅԹԱՅԹԻՉ ԹՈՒՐԿԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵՐԻՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԵՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ , ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր 'եքենայի վրայ Սինգերի ներկայ յաճկանչիմ



Ձրի դասեր եւ նորոգու-թիւններ , յաճախորդաց տուններուն մէջ .

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու . յւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ԳԻՆ ՉԱՓԸ

ԱՇԽԱՐՀԻ ԲՈՂՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՅԻՂԵՐ ՈՒՆԻ

ՃԱՇԱՐԱՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ՊԱՋԱՐ ՄԻՐՈՒՐ ԹԻՒ 19

ԱՒԵՏԻՍ ՊՅՅԱՃՅԱՆ

Մեր ճաշարանին մէջ կը պատ-րաստուին Եւրոպական եւ Արեւել-եան ընտիր կերակուրներ . պան-դուխտ երիտասարդները եթէ ան-գամ մը այցելեն մեծապէս գոհ պիտի մնան մատչելի գիներէն . 14

Ի . Ա . ԵՐԱՆ

Հրս արուեստիւններ

ԱՅՈՒՄԵԱԿԱՆ ԳԻՐԿԵՐ ԱՄԷՆԻՆ ԱԼ

Բաւարական հայերեկե-անգլիերեկե սակ .	50
Բաւարական անգլիերեկե-հայերեկե »	75
Հայ . անգլ . եւ անգլ . հայ միասին սալ .	1 -
Պատ . գրուցարարութիւն հայ . անգլ . »	150
Գործնական արտոյտարարութիւն »	150
Սեռային արտոյտարարութիւն »	125
Գործն . եւ սեռ . արտոյտ . միասին »	2 -
Ժողովրդային երգարան »	2 -
Երգարան եւ սեռ . արտոյտ . միասին »	3 -
Երգ . եւ գործն . արտոյտ . միասին »	3 -

Հասցէ՝ E . A . YERAN P . O . BOX 84 , Sta . A . Cambridge , Mass .

ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԴԵՐՁԱԿ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Փոխադրուած է Շարա Ապտ էլ Ալիզ Ապտիի Գարագոյին մօտ .

Անոնք որ ճաշակաւոր գօսքիւմ մ . ւնենալու համար զանազան տեղեր դի-մած ու զժգոհ մնացած են , թող ան-դամ մը մեր վաճառատունը այցելեն . պատրաստ եմ իրենց հետ պայմանաւոր-ուիլ որ՝ եթէ իրենց յանձնարարութիւն-ը չը գոհացուցիչ չ'գտնեն , կանխավճարը ամբողջովին ետ պիտի ստանան :

Այս պայմանը՝ ճաշակաւոր հագ-ուելու փոխադրողներուն համար , նը-պատաստուր առիթ մը պիտի ըլլայ :

Ապառիկ ապագանքները նկատու-թեան շին առնուիլ , եւ անոնք որ ինծի կը գիմեն , դիւրաւ կրնան ըմբռ-նել պատիկին տարբերութիւնները . Թէ գործի մաքրութեան եւ թէ գի-ւերու մասին :

1-50 ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԾՈՎԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԹԱՅԻՆ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Լ . ԵՆՈՎՔԵԱՆ ԵՒ ԸՆԿ .

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ (Երկրպետ)

Շարաթական կանոնաւոր երթելեկ

Միացեալ նահանգներու , Բա-նասայի եւ Հարաւային Ամերիկա-յի համար .

Գաղթականներու համար չափ-ւոր գին :

Աչքի քննութիւնը ճիշտաւոր կը կատարուի տեղւոյս մէջ , Մանրախաւսի ժողովրդական

համար դիմել Գործակալութեան . ՄՕՀԱՄԷՏ ԱԼԻ ՀՐԱՊԱՐԱԿ

Հեռագրական Հասցէ -- ԼԵՆՕՔՕ Փոսթ արկղ Թիւ 897

Թուրքիոյ գաւառներու մէջ

փոխ - գործակալներ կը փնտրուին

Արսօնեայի ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

Սեփական Տպարան ԱՐՇԱԼՈՅՍ Լրագրոյ

Վ Ա Ր Չ Ո Ւ